

DOI: 10.59560/18291155-2025.4-266



**ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Հայ-ռուսական համալսարանի  
Իրավունքի ինստիտուտ,  
իրավունքի տեսության և  
սահմանադրական իրավունքի  
ամբիոնի հայցորդ*

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆՈՐՄԵՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ  
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.  
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Ամփոփագիր**

Սույն հոդվածը նվիրված է սահմանադրական իրավունքի տեսության հիմնահարցերից մեկի՝ միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության հայեցակարգային հիմնախնդիրների հետազոտությանը, ինչպես նաև այդ տեսության ծագմանն առնչվող տեսակետների և դրա պատմական զարգացման որոշակի առանձնահատկությունների հիմնահարցերի համակարգային վերլուծությանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մասնագիտական գրականության շրջանակում միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության առաջացումը հաճախ փոխկապակցվում է ԱՄՆ Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետի կարգավորումների և դրանց իրավակիրառ պրակտիկայի հետ, ուստի աշխատանքում համակարգային վերլուծության են ենթարկվել ԱՄՆ Գերագույն դատարանի դատական պրակտիկան, այդ թվում՝ դատարանի առանձին որոշումների կիրառական նշանակության համատեքստում:

Միաժամանակ, աշխատանքում առանձնակի ուշադրության է արժանացել տարբեր երկրների սահմանադրական կարգավորումներում ներպետական իրավական համակարգի վրա միջազգային պայմանագրի նորմերի անմիջական գործողության ազդեցության, ինչպես նաև այդ նորմերի գերակայության, անմիջական կիրառելիության ու դրա ճանաչման կառուցակարգերի ամբողջական բացահայտման հիմնահարցերի ուսումնասիրությունը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ԴՏԵԿՎԱԳԻՐ ◆ ՏԵԴԵԿՎԱԳԻՐ ◆ 4(121)2025

Աշխատանքում կատարված վերլուծությունների արդյունքում ներկայացվել է, մասնավորապես, հետևյալ եզրահանգումը, որ միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության առաջացումը պայմանավորված է ոչ միայն միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարման անհրաժեշտությամբ, այլև՝ ներպետական իրավական համակարգում իրավական այնպիսի կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությամբ, որով կերաշխավորվի պետության ներպետական իրավակարգում միջազգային պայմանագրերի լիարժեք կիրառումը:

Աշխատանքում ներկայացվել է նաև այն եզրահանգումը, որ այդ մոտեցումներն ամբողջությամբ վերաբերում են նաև Հայաստանի Հանրապետությանը, որովհետև թեև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը ճանաչում է միջազգային պայմանագրերի նորմերի գերակայությունը, այնուամենայնիվ դրանց իրական, գործնական կիրառելիության խնդիրը մնում է բաց և պահանջում է իրավաքաղաքական և հայեցակարգային հստակեցում:

**Հիմնաբառեր.** միջազգային պայմանագիր, Սահմանադրություն, ներպետական իրավական համակարգ, պատմաիրավական վերլուծություն, տեսություն:

### Ընդհանուր դրույթներ

Միջազգային իրավունքի զարգացման պատմության ընթացքում կարևոր նշանակություն է ստացել այն մոտեցումը, թե միջազգային պայմանագրերի նորմերը ինչ ազդեցություն են ունենում կամ կարող են ունենալ ներպետական իրավաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայի վրա: Այս առումով անհրաժեշտ է կարևորել միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության իրավական բովանդակության ու գործառնական նշանակության հիմնախնդիրների համակարգային հետազոտությունը սահմանադրական իրավունքի տեսության և պրակտիկայի համատեքստում:

Նախ՝ ի՞նչ է ենթադրում միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողությունը: Իրավագիտության մեջ շրջանառվում է հետևյալ ընդհանրական մոտեցումը, ըստ որի՝ միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողությունն ենթադրում է ներպետական իրավունքի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների նախատեսում՝ պետության իրավական համակարգում որոշակի պայմանների առկայության դեպքում<sup>1</sup>:

Այս տեսության ծագմանն առնչվող տեսակետների համաձայն՝ դրանք փոխկապակցվում են միջազգային նույն պայմանագրերի նորմերի ինկորպորացիայի տեսության հետ: Վերջինս ձևավորվել է XVIII դարի Անգլիայում և

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Барбук А.В.** *Непосредственное действие международных договоров: теоретический аспект* // БЖМПМО. 2003. № 2, էջ 5.

սկզբնապես կիրառվել է միջազգային սովորության իրավունքի նորմերի նկատմամբ:

Ինկորպորացիայի դոկտրինի բովանդակության վերաբերյալ առավել հստակ արտահայտվել է անգլիացի իրավաբան Ու. Բլեքսթոունն իր հայտնի ձևակերպման մեջ, այն է. «Ժողովուրդների իրավունքները, անկախ նրանից՝ որտեղ են դրանք ծագում, ամբողջությամբ ընդունվում են ընդհանուր իրավունքի կողմից և հանդիսանում են պետության իրավունքի կամ իրավական համակարգի մաս»<sup>1</sup>:

Այս մոտեցումն ունի իր նախապատմությունը և պրակտիկան: Այսպես, օրինակ, 1737 թվականին *Buvot v. Barbuit* գործով անգլիական դատարանի դատավոր Լորդ Թելբոթը հայտարարեց, որ «Ժողովուրդների իրավունքը կազմում է Անգլիայի իրավունքի մաս», ինչը հետագայում կրկին վերահաստատվեց 1764 թվականի՝ *Triquet v. Bath* գործի շրջանակում, որով այդ սկզբունքը դատարանում դիտարկվեց որպես իրավական փաստարկ<sup>2</sup>:

Ինկորպորացիայի դոկտրինը տարածում ստացավ նաև միջազգային պայմանագրային հետագա հարաբերություններում: Այս սկզբունքի օրենսդրական ամրագրման ամենահայտնի դրսևորումներից է 1787 թ. ԱՄՆ Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետը<sup>3</sup>, որի համաձայն. «ԱՄՆ Սահմանադրությունը, դրա հիման վրա ընդունված օրենքները, ինչպես նաև ԱՄՆ-ի անունից կնքված բոլոր միջազգային պայմանագրերը հանդիսանում են երկրի բարձրագույն իրավունք»<sup>4</sup>: Այս դրույթը գիտական գրականության մեջ ստացել է «բարձրագույն կլաուզուլա» (*Supremacy Clause*) անվանումը և կարևոր նշանակություն է ունեցել միջազգային իրավունքի և ներպետական

4(121)2025

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆

<sup>1</sup> *St'u Blackstone, W. Commentaries on the laws of England. In four books. Book IV. The 11<sup>th</sup> edition. London, 1791, էջ 67: Бэппес Р.Т. Документы Американской Революции: Декларация независимости, Конституция Соединенных Штатов, Билль о правах. – Тверь; Москва: Альба, 1994, էջ 102: «Ժողովուրդների իրավունք» ասելով հեղինակը հասկանում է՝ «(...) կանոնների համակարգ, որը բխում է բնական ճանապարհով և հաստատվում է աշխարհի քաղաքակիրթ բնակիչների միջև համընդհանուր համաձայնության միջոցով, որպեսզի լուծեն բոլոր վեճերը, կարգավորեն բոլոր արարողություններն ու քաղաքավարության գործողությունները և երաշխավորեն արդարության և բարեխղճության պահպանումը այն հաղորդակցության մեջ, որը սովորաբար պեղք է տեղի ունենա երկու կամ ավելի անկախ պետությունների և նրանցից յուրաքանչյուրին պատկանող անհատների միջև»: (Ibid. P. 66): Այսպիսով, Վ. Բլեքսթոունը, խոսելով «Ժողովուրդների իրավունքի» մասին, ակնհայտորեն նկատի ունի սովորական միջազգային իրավունքի նորմերը:*

<sup>2</sup> *St'u Blackstone, W. Նույն աշխ. էջ 129-130:*

<sup>3</sup> *St'u դրա մասին Барбук А.В. Непосредственное действие международных договоров: теоретический аспект // МПУМО. 2013. № 2, էջ 5:*

<sup>4</sup> *St'u Бэппес Р.Т. Документы Американской Революции: Декларация независимости, Конституция Соединенных Штатов, Билль о правах. – Тверь; Москва, 1994, էջ 202–203:*

իրավունքի փոխադարձ առնչության վերաբերյալ տեսությունների ու հարաբերությունների զարգացման մեջ<sup>1</sup>:

Միաժամանակ, ԱՄՆ Սահմանադրության կարգավորումների շրջանակում «բարձրագույն կլաուզուլայի» ներառումը պայմանավորված էր պատմական իրավաքաղաքական անհրաժեշտությամբ: Մասնավորապես, դրա առաջացման գործոնը եղել են ԱՄՆ նահանգների կողմից Մեծ Բրիտանիայի հետ 1783 թվականին կնքված Խաղաղության պայմանագրի պահանջների խախտումները՝ մինչև 1787 թվականի Սահմանադրության ընդունումը: Այս հանգամանքը վկայում է, որ միջազգային պայմանագրերի նկատմամբ իրավական պարտավորությունների սահմանումը կապված է ոչ միայն իրավաքաղաքական դոկտրինի, այլև միջազգային իրավունքի նորմերի հուսալիության խնդրի հետ: Այլ կերպ ասած՝ միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման գաղափարը պատմականորեն ձևավորվել է՝ ելնելով միջազգային իրավական պատասխանատվության ապահովման անհրաժեշտությունից:

Պրոֆեսոր Կ.Մ. Վազկեզն արդարացիորեն նկատել է, որ խնդրի էությունը պայմանավորված է այն ժամանակվա տարածված այն ընկալմամբ, թե «ԱՄՆ դատարաններում միջազգային կնքած պայմանագրերը չեն հանդիսանում որևէ օրենք, նույնիսկ այն դեպքում, երբ նահանգային օրենսդրությունը հակասում էր պայմանագրային նորմերին»<sup>2</sup>: Այս դիտարկումը ցույց է տալիս հետևյալը, որ պետական իշխանության տարբեր մարմինների միջև՝ անգամ լիազորությունների հարցով ծագած վեճերը բացառում էին միջազգային պայմանագրերի արդյունավետ իրականացումը առանց դրանց ներքին ուժի ճանաչման:

Այստեղից ի հայտ է գալիս միջազգային պայմանագրերի իրավունքի և ներպետական իրավունքի փոխհարաբերության հիմնական խնդիրը՝ ո՞րն է՝ իրավական նորմի ուժի աղբյուրը՝ միջազգային որոշումը, թե՞ ներպետական իրավական հաստատումը:

Պրոֆեսոր Կ.Մ. Վազկեզի մեկ այլ կարծիքով՝ «բարձրագույն կլաուզուլայի» ընդունման նպատակն էր «կանխել ԱՄՆ պայմանագրերի խախտումները նահանգների կողմից»<sup>3</sup>: Այս դրույթը ոչ միայն ամրագրեց պայմանագրերի գերակայությունը, այլև առաջավոր գաղափար ձևակերպեց՝ միջազգային պայմանագրերը պետք է լինեն անմիջականորեն կիրառելի՝ առանց ներպետական լրացուցիչ ակտերի: Այս մոտեցումը կարևոր նշանակություն ունի միջազգային իրավունքի զարգացման տեսանկյունից, պայմանագրի գործողության ուժը չի բխում նրանից, թե ազգային օրենսդրությունն ինչ կարգավորում է ստացել, այլ այն, որ միջազգային պարտավորությունն ինքնին

<sup>1</sup> *St'u Supremacy Clause [Electronic resource] // Wikipedia: The Free Encyclopedia. URL: [http://en.wikipedia.org/wiki/Supremacy\\_Clause](http://en.wikipedia.org/wiki/Supremacy_Clause)*

<sup>2</sup> *St'u Vazquez, C.M. The Four Doctrines of Self-executing Treaties // AJIL. 1995. Vol. 89. №4. էջ 698:*

<sup>3</sup> *St'u Vazquez, C.M. Նույն աշխ. մեջ, էջ 699:*

կրում է կայուն իրավական բնույթ: Այդ կապակցությամբ նույն հեղինակը նկատել էր, որ՝ «... բարձրագույն կլաուզուլան վերացրել է օրենսդրական լրացման մեկ ձևի անհրաժեշտությունը՝ ... այն օրենսդրությունը, որը պայմանագրի դրույթին ներպետական օրենքի ուժ է տալիս և, հետևաբար, դարձնում է պայմանագիրը ընդունելի դատարանների և պարտադիր նրանց և ներպետական իրավունքը կիրառող այլ պաշտոնյաների համար»<sup>1</sup>:

Ամերիկյան մեկ այլ իրավագետ Ջ. Սթորին, մեկնաբանելով Բարձրագույն կլաուզուլան, նշում էր. «Պայմանագրերը պետությունների միջև պարտադիր համաձայնություններ են, և այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն կիրառվում դատական համակարգի կողմից, չի կարող լինել վստահություն միջազգային հարաբերություններում»<sup>2</sup>: Այստեղ նկատելի է տեսական կարևոր եզրահանգում՝ միջազգային իրավունքի կիրառման երաշխավորը ոչ թե քաղաքական կամքն է, այլ՝ իրավական մեխանիզմը, որը պիտի գործի ներպետական մակարդակում:

Այս մոտեցումն ամրապնդվեց նաև ԱՄՆ դատական պրակտիկայում: Մասնավորապես, ԱՄՆ Գերագույն դատարանը՝ *Ware v. Hylton* (1796) գործով եզրակացրեց, որ միջազգային պայմանագիրը բարձրագույն իրավական ուժով է օժտվում և կարող է չեղարկել նույնիսկ նահանգի օրենքը, եթե այն հակասում է պայմանագրին<sup>3</sup>:

Նույն դատարանի դատական պրակտիկայի շրջանակում՝ *Owings v. Norwood's Lessee* (1809) գործով՝ դատավոր Ջ. Մարշալը հավելեց. «Միջազգային պայմանագրերը ոչ միայն պետությունների հարաբերություններն են կարգավորում, այլև կարող են ուղղակի կերպով ստեղծել իրավունքներ և պարտականություններ մասնավոր անձանց համար»: Սա իրավական տեսանկյունից բեկումնային դիրքորոշում էր, քանի որ այստեղ հստակ ձևակերպվեց անմիջական գործողության սկզբունքը<sup>4</sup>:

Այս դիրքորոշումները վկայում են երկու կարևոր հանգամանքների առկայության մասին:

**Առաջին՝** Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետի՝ պայմանագրերին վերաբերող դրույթի ամրագրումը նպատակ ուներ ԱՄՆ դատարաններում ապահովել դրանց կատարման պարտադիրությունը՝ բացառելով այդ դրույթի

<sup>1</sup> *St' u նույն տեղում:*

<sup>2</sup> **Story, J.** *Commentaries on the Constitution of The United States: With a preliminary review of the constitutional history of the colonies and states, before the adoption of the Constitution. In III volumes. Vol. III. Boston, Cambridge, 1833. էջ 694-695. URL: <http://repository.law.umich.edu/books/102/>*

<sup>3</sup> *Ware v. Hilton* [Electronic resource]: U.S. Supreme Court, 1796 // *US Supreme Court Cases & Opinions. Vol. 3. P. 237* // *Justia: Law & Legal Information for Lawyers, Students, Business and the Public. URL: <http://supreme.justia.com/cases/federal/us/3/199/case.html>.*

<sup>4</sup> *St' u Owings v. Norwood's Lessee* [Electronic resource]: [U.S. Supreme Court]. February Term, 1809 // *Open Jurist. URL: <http://openjurist.org/9/us/344/ovings-v-norwoods-lessee>.*

հռչակագրային բնույթը: Այս հանգամանքը, կարծում ենք, յուրահատուկ իրավաքաղաքական քայլ էր, և պատահական չէր Սահմանադրության հեղինակների այն պնդման նշանակությունը, որ միջազգային պարտավորությունները չեն կարող իրագործվել արդյունավետ, եթե դրանց ապահովումը թողնվի միայն պետական քաղաքական մարմինների կամաարտահայտմանը: Այստեղից, միջազգային պայմանագրերի իրականացման կառուցակարգի արդյունավետությունը պայմանավորված է դատարանների կողմից դրանց կիրառման անհրաժեշտությամբ, ինչը կազմել է միջազգային պայմանագրերի նորմերի ներպետական իրականացման ինստիտուցիոնալ հիմք:

**Երկրորդ՝** «բարձրագույն կլաուզուլայի» ամրագրումը հանգեցրեց կարևոր իրավաքաղաքական գործընթացների իրագործմանը: Մասնավորապես, ԱՄՆ դատարանները սկսեցին պաշտպանություն տրամադրել ոչ միայն պետությունների, այլև մասնավոր անձանց իրավունքներին, որոնք բխում էին միջազգային պայմանագրերով պետության կողմից ստանձնած պարտավորություններից: Սա ցույց է տալիս, որ միջազգային պայմանագրերը ԱՄՆ իրավական համակարգում դիտվում են ոչ թե որպես քաղաքական համաձայնություններ, այլ իրավունքի անմիջական կիրառման ունակ նորմատիվ ակտեր: Ասվածի տրամաբանությունից բխում է, որ միջազգային պայմանագրերը կարող են ունենալ ազդեցություն կամ միջամտել ներպետական իրավական հարաբերություններին՝ ստեղծելով սուբյեկտիվ իրավունքներ և պարտավորություններ, ընդ որում՝ առանց ներպետական լրացուցիչ իրավական կարգավորումների:

Բացի այդ, միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության առաջացումը հաճախ փոխկապակցվում է հենց ԱՄՆ Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետի կարգավորման հետ<sup>1</sup>, սակայն, ինչպես ցույց է տալիս սահմանադրական այդ նորմերի պատմաիրավական վերլուծությունը, այս դրույթը չի կարող դիտարկվել որպես տվյալ տեսության միակ, կա՛մ սկզբնական, կա՛մ առաջնային աղբյուր: Իրականում, ԱՄՆ Սահմանադրության դեռևս ավելի վաղ ձևավորված գաղափարական հիմքում դրված է ինկորպորացիայի տեսությունը, որը նախ կիրառվել էր ոչ միայն միջազգային սովորության, այլև՝ միջազգային պայմանագրերի նորմերի նկատմամբ:

Միաժամանակ, միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսությունն ունեցել է պատմական զարգացման որոշակի առանձնահատկություններ: Այսպես, դեռ հնագույն ժամանակներում միջազգային պայմանագրերը կրել են պարտադիր ուժ ոչ միայն պետության համար, այլև նույն պետության բնակիչների համար: Օրինակ, Աշուրներար V-ի և Մատիիլուի, ինչպես նաև Էսարխադդոնի պայմանագրերի բովանդակությունից

<sup>1</sup> Տե՛ս **Бардык А.** Նշվ. աշխ., էջ 5:

բխում է, որ. «պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների քաղաքացիները պարտավոր էին պահպանել այդ պայմանագրերը նույն կերպ, ինչպես ներպետական օրենքները»<sup>1</sup>: Սա վկայում է այն մասին, որ միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության հիմքում ընկած էր այն գաղափարը, որ այն ուներ ոչ միայն կիրառական ու գործնական նշանակություն, այլև կրում էր հայեցակարգային բնույթ իրավական համապատասխան հարաբերությունները կարգավորելու նպատակով<sup>2</sup>:

Մասնավորապես, ասվածի համատեքստում անհրաժեշտ է նկատել, որ ԱՄՆ դատարաններն արդարադատություն իրականացնելիս սկսեցին մեկնաբանել միջազգային պայմանագրերի իրավական բնույթը և կիրառելիության չափանիշները: Այսպես, 1809 թվականին *Owings v. Norwood's Lessee* գործի շրջանակում ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր Դ. Մարշալը ձևակերպեց կարևոր դիրքորոշում, ըստ որի՝ «յուրաքանչյուր իրավունք, որը ծագում է միջազգային պայմանագրից կամ պաշտպանվում է դրանով, պարտադիր է՝ անկախ նահանգային օրենքների ու դատական ակտերի բովանդակությունից»<sup>3</sup>:

Միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության հիմնավորման համար առանցքային քայլը կատարվեց նաև ԱՄՆ Գերագույն դատարանի 1829 թվականի *Foster v. Neilson* գործի շրջանակում, երբ առաջին անգամ հստակ տարանջատվեցին այսպես կոչված գործողությունների ինքնաշխատ կատարում (*self-executing*) և ոչ անմիջական գործողությունների կատարում (*non-self-executing*) ապահովող միջազգային պայմանագրերը՝ դրանով իսկ հիմք դնելով միջազգային պայմանագրի նորմերի անմիջական գործողության տեսության համակարգված ձևավորման ու ներդրման համար<sup>4</sup>:

Նույն գործի շրջանակում արտահայտված դիրքորոշումների հիման վրա ԱՄՆ Գերագույն դատարանը 1821 թվականին ԱՄՆ-ի և Իսպանիայի միջև կնքված «Բարեկամության, հաշվեկշռման և սահմանի մասին» պայմանագրի 8-րդ հոդվածի մեկնաբանություններում սահմանեց, որ. «Բոլոր հոդային նվիրատվությունների ակտերը, որոնք կատարվել են 1818 թ. հունվարի 24-ից առաջ նրա կաթոլիկ մեծության կողմից, պետք է ընդունվեն և հաստատվեն որպես տվյալ անձանց սեփականությունը այդ հողերի նկատմամբ...»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Буткевич О.В. У истоков международного права. - СПб., 2008, էջ 382:*

<sup>2</sup> Տե՛ս *Философский энциклопедический словарь / Ред.-сост.: Е.Ф. Губский, Г.В. Кораблева, В.А. Лутченко. - М., 2017, էջ 458:*

<sup>3</sup> Տե՛ս *Owings v. Norwood's Lessee [Electronic resource]: [U.S. Supreme Court]. February Term, 1809 // Open Jurist. URL: <http://openjurist.org/9/us/344/ovvings-v-norwoods-lessee>.*

<sup>4</sup> Տե՛ս *James Foster and Pleasants Elam v. David Neilson [Electronic resource]: [U.S. Supreme Court]. January Term, 1829 // Open Jurist. URL: <http://openjurist.org/27/us/253/james-foster-v-david-neilson>.*

<sup>5</sup> Տե՛ս նույն *James Foster and Pleasants Elam v. David Neilson* դրոշմը:

Բացի այդ, միջազգային իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում շրջանառվում է այն մոտեցումը, ըստ որի միջազգային պայմանագրով պետության ստանձնած պարտավորությունը ենթակա է կատարման բացառապես ներպետական իրավական ակտի ընդունման միջոցով: Այստեղ իսկապես գոյություն ունի նրբերանգ, այն է. միջազգային պարտավորությունը կարող է բովանդակային առումով պարտավորական բնույթ ունենալ, բայց միջազգային պայմանագիրը չկրի անմիջական գործողության կատարման ակտի բնույթ: Այս նրբերանգը, այնուամենայնիվ, պատշաճ իրավաբանական ձևակերպում չգտավ ԱՄՆ Սահմանադրության տեքստում, ինչն էլ հետագայում հանգեցրեց դոկտրինալ ու դատական մեկնաբանության անհրաժեշտության:

Պրոֆեսոր Զ. Փաուստը, ուսումնասիրելով Սահմանադրության մշակմանն առնչվող նյութերը, արտահայտել է նկատառում, որ՝ «սահմանադրության նախագծերի հեղինակների մեծամասնությունը նպատակ ուներ, որպեսզի բոլոր պայմանագրերը անհապաղ դառնան պարտադիր կատարման ակտեր՝ երկրի օրենքներին զուգահեռ»<sup>1</sup>, և մինչև 1829 թվականը ԱՄՆ-ի դատական պրակտիկան, փաստորեն, առաջնորդվում էր այս մոտեցմամբ՝ միջազգային պայմանագրերին վերաբերող նորմերն ընկալելով որպես իրավական ուժ ունեցող և դատարաններում կիրառելի նորմեր:

Սակայն, հարկ է ընդգծել, որ այս մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ, մի կողմից, միջազգային պայմանագիրն իր էությամբ ընկալվում է որպես պետությունների միջև ստորագրված համաձայնագիր, բայց ոչ օրենսդրական ակտ, հետևաբար այն իրավաբանական ուժ չունի իր վերջնական հասցեատերերի համար, իսկ, մյուս կողմից, միջազգային պայմանագիրը դիտարկվում է որպես պետության իրավական համակարգի մաս, հետևաբար այն դատարանների կողմից պետք է կիրառվի որպես օրենքի ուժ ունեցող նորմ, բայց միայն այն դեպքում, երբ գործում է ինքնուրույն՝ առանց օրենսդրի միջամտության: Իսկ եթե պայմանագրով նախատեսվում է, որ պետությունը պետք է կատարի որոշակի գործողություն, ապա այդպիսի պարտավորությունը կրում է քաղաքական բնույթ, որի կատարման հասցեատերերը օրենսդիր կամ գործադիր իշխանության մարմիններն են, այլ ոչ թե դատարանները»<sup>2</sup>:

ԱՄՆ Գերագույն դատարանը եզրակացրեց, որ իսպանական հողային նվիրատվությունների վավերացումը չի բխում ուղղակի պայմանագրի տեքստից. այն պահանջում է օրենսդրական վավերացում: Այսինքն՝ պայմանագրի այս նորմը չունի անմիջական գործողություն և չի կարող կիրառվել առանց ներպետական իրավական միջամտության<sup>3</sup>: Այս վճռից հետո

<sup>1</sup> *St'u Blackstone, W. Commentaries on the laws of England. In four books. Book IV. The 11<sup>th</sup> edition. London, 1791. էջ 764-766 // URL: <http://repository.law.umich.edu/books/102/>*

<sup>2</sup> *St'u Blackstone, W. Նույն աշխ. էջ 765:*

<sup>3</sup> *St'u նույն Owings v. Norwood's Lessee որոշումը:*

ամրապնդվեց այն դիրքորոշումը, որ միջազգային այն պայմանագրերը, որոնք կարող են կիրառվել առանց ներպետական ակտերի, դիտարկվում են որպես գործողությունների ինքնաշխատ կատարում ապահովող պայմանագրեր (self-executing), իսկ այն պայմանագրերը, որոնք պահանջում են ներպետական մեխանիզմների, այդ թվում՝ իրավական ակտերի ընդունում՝ ոչ անմիջական գործողությունների կատարում (non-self-executing) ապահովող պայմանագրեր:

Նման դասակարգումը, կարծում ենք, ուներ ոչ միայն տեխնիկական բնույթ, այլև՝ միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության դոկտրինալ նշանակություն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ միջազգային պայմանագրի անմիջական գործողության տեսությունն ի հայտ եկավ ԱՄՆ-ում՝ XIX դարի առաջին կեսին՝ Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետի մեկնաբանության արդյունքում, երբ միջազգային պայմանագրի իրավունքի և ներպետական իրավունքի փոխհարաբերությունների հիմքում դրվեց միջազգային իրավունքի կիրառելիության խնդիրը, այլ ոչ թե միայն սահմանադրական նորմի գերակայության ապահովումը: Այսինքն, միջազգային պայմանագրերի իրավական ուժի ճանաչումը չի կարող բավարար լինել, եթե չապահովվի դրանց իրական կիրառելիությունը ներպետական իրավական համակարգում, հակառակ դեպքում այդ համակարգը կունենա միայն ձևական, բայց ոչ նյութական համապատասխանություն միջազգային պայմանագրի իրավունքի պահանջներին:

Այս մոտեցումը կարևոր նշանակություն ունեցավ ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի ձևավորման համար: Այսպես, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, կարևորելով միջազգային պայմանագրերի նշանակությունը, սահմանադրական մակարդակով նույնպես ճանաչել է այդ պայմանագրերի կատարման պարտադիր ուժը՝ դրանով Հայաստանի Հանրապետության իրավակարգը մոտեցնելով մոնիստական մոտեցմանը:

Միաժամանակ, միջազգային պայմանագրի նորմերի անմիջական գործողության գաղափարն իր ամրագրումն է ստացել մի շարք պետությունների սահմանադրական կարգավորումներում, որտեղ միջազգային պայմանագրերի ներպետական ազդեցությունը ճանաչվում է իրավաչափ և պարտադիր: Դրա օրինակներից է Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի. «միջազգային պայմանագրերը, որոնք վավերացվել են Հանրապետության կողմից, գերակայություն ունեն նրա օրենքների նկատմամբ և կիրառվում են անմիջապես, բացառությամբ այն դեպքերի, երբ միջազգային պայմանագրից բխում է, որ դրա կիրառման համար անհրաժեշտ է օրենք ընդունել»: Այս դրույթը ոչ միայն ամրագրում է պայմանագրերի գերակայությունը օրենքների նկատմամբ, այլև հստակ նշում է դրա կիրառման կառուցակարգը՝

երաշխավորվում է անմիջական և միջնորդավորված կիրառման հնարավորությունների միջոցով<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, նման հստակ և լիարժեք սահմանադրական ձևակերպումներ այսօր բավականին հազվադեպ են հանդիպում: Ավելի հաճախ պետությունների սահմանադրություններում միջազգային պայմանագրերի նորմերի ներպետական ազդեցությունը դրսևորվում է այն կառուցակարգի միջոցով, ըստ որի՝ միջազգային պայմանագրերը դիտարկվում են պետության իրավական համակարգի (իրավակարգի, օրենսդրության) մաս: Անշուշտ, նման ձևակերպումները դեռևս հնարավորություն են տալիս պայմանագրային նորմերի ներպետական գործողությանը, քանի դեռ չեն սահմանվում դրանց կիրառման եղանակները, այսինքն՝ միջազգային պայմանագրերը գործում են անմիջապես, թե միայն ներպետական իրավական նորմերի միջոցով:

Նկատենք մի քանի բնորոշ օրինակներ. Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրության 134-րդ հոդվածը սահմանում է, որ. «միջազգային պայմանագրերը, որոնք կնքված և վավերացվել են Սահմանադրությանը համապատասխան և հրապարակվել են, հանդիսանում են Հանրապետության իրավական նորմերի համակարգի անբաժանելի մասը և ունեն օրենքից բարձր իրավաբանական ուժ»<sup>2</sup>: Նույն մոտեցումն է արտացոլված Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 138-րդ հոդվածում, որտեղ ամրագրված է. «Լիտվայի Հանրապետության Սեյմի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը հանդիսանում են Լիտվայի Հանրապետության իրավական համակարգի անբաժանելի մաս»<sup>3</sup>: Իսկ Ուկրաինայի Սահմանադրության 9-րդ հոդվածը ևս սահմանում է, որ. «գործող միջազգային պայմանագրերը, որոնց պարտադիր ուժը հաստատվել է Ուկրաինայի Գերագույն Ռադայի կողմից, հանդիսանում են Ուկրաինայի ազգային օրենսդրության մաս»<sup>4</sup>:

Թեպետ այս ձևակերպումներն արտաքինից ունեն ընդհանուր բնույթ և չեն հստակեցնում պայմանագրերի կիրառման մեխանիզմը, սակայն դրանց իրավաքաղաքական ու գործառնական նշանակությունը ակնհայտ է, քանի որ պետությունը ճանաչում է միջազգային պայմանագրի իրավունքը ոչ թե որպես արտաքին իրավական ազդեցություն, այլ որպես սեփական իրավաստեղծ գործունեության շարունակություն, որն իրականանում է պետության արտաքին քաղաքականության իրականացման արդյունքում: Այլ կերպ ասած՝

<sup>1</sup> *St' u Konstitucija Respubliki Kazaxstan ot 30 avgusta 1995 z. // Konstitucii gosudarstv Evropy. V 3 t. T. 2 / Pod общ. ред. Л.А. Окунькова. - М., 2001, էջ 167.*

<sup>2</sup> *St' u Konstitucija Respubliki Hорватия ot 22 декабря 1990 z. // Konstitucii gosudarstv Evropy. V 3 t. T. 3 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М.: Норма, 2001, էջ 471:*

<sup>3</sup> *St' u Konstitucija Литовской Республики ot 25 октября 1992 z. // Konstitucii gosudarstv Evropy. V 3 t. T. 2 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М.: Норма, 2001, էջ 359:*

<sup>4</sup> *St' u Konstitucija Украины ot 28 июня 1996 z. // Konstitucii gosudarstv Evropy. V 3 t. T. 3 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М.: Норма, 2001, էջ 311:*

միջազգային պայմանագրերը վերաձվում են ներպետական իրավունքի աղբյուրի, որոնք ազգային օրենսդրության հետ համատեղ մասնակցում են հասարակական հարաբերությունների կարգավորմանը:

Նույն միտումը նկատվում է նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգավորումներում: Մասնավորապես, ՌԴ Սահմանադրության 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ. «միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը և Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերը նրա իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրով սահմանված են այլ կանոններ, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի կանոնները»<sup>1</sup>: Սահմանադրական այս դրույթը հռչակում է ոչ միայն միջազգային պայմանագրի նորմերի գերակայությունը, այլև՝ այդ նորմերի անմիջական կիրառելիության սկզբունքի բացահայտ ճանաչումը, թեկուզ առանց դրա մեխանիզմի ամբողջական բացահայտման:

Մինչև այս պահը ներկայացված սահմանադրական օրինակները փաստում են, որ միջազգային պայմանագրի նորմերի ներպետական ընդգրկման գաղափարը ժամանակակից աշխարհում լայն տարածում ունի, սակայն այս դրույթների նորմատիվ նմանությունը չի նշանակում դրանց իրավական բովանդակային նույնություն: Իրականում այստեղ առկա է սկզբունքային տարբերություն. մի բան է միջազգային իրավունքի ներմուծումը (ինկորպորացիա) ազգային իրավակարգ, այլ բան՝ միջազգային իրավունքի անմիջական կիրառելիության ապահովումը: Առաջին դեպքում պետությունը պարզապես հայտարարում է, որ միջազգային պայմանագրերը իր իրավական համակարգի մաս են (ինչը հիմնականում դեկլարատիվ բնույթ ունի), մինչդեռ երկրորդ դեպքում պետությունը ստեղծում է իրավական մեխանիզմներ, որոնք ապահովում են այդ նորմերի իրական կիրառումը ներպետական իրավական հարաբերություններում:

Այս տարբերակումը երկար ժամանակ անտեսվել է իրավաբանական գրականության մի մասում, որտեղ միջազգային պայմանագրի ներպետական ուժի ապահովումը նույնացվել է դրա քաղաքական ընդունման հետ: Սակայն իրավունքի տեսության և հատկապես կիրառական իրավաբանության տեսանկյունից որոշիչը ոչ թե միջազգային իրավունքի ճանաչումն է, այլ նրա կիրառելիության ապահովումը: Հակառակ դեպքում միջազգային իրավունքը մնում է իրավաքաղաքական հռչակագիր՝ առանց գործնական արդյունքի:

<sup>1</sup> St'u Конституция Российской Федерации: принята всенародным голосованием 12 декабря 1993 г. // РГ. 1993. 25 декабря. (в ред. Закона Российской Федерации о поправке к Конституции Российской Федерации от 30 декабря 2008 г. № 7-ФКЗ):

Այս առումով Ղազախստանի, Խորվաթիայի, Լիտվայի և Ուկրաինայի սահմանադրական դրույթներն անհրաժեշտ նորմատիվ կարգավորումներ են, բայց ոչ բավարար դրանց իրավական կիրառելիության ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրինակը առավել յուրահատուկ է այն առումով, որ սահմանադրական նորմերը նախատեսում են ազգային օրենսդրության նկատմամբ միջազգային պայմանագրերի նորմերի գերակայություն, սակայն իրավակիրառ պրակտիկան մեծապես կախված է դատարանների կամ քաղաքական իշխանության մարմինների պատրաստակամությունից՝ պայմանագրային նորմերը մեկնաբանելու ուղղակի կիրառելիության միջոցով: Այսինքն՝ նույն սահմանադրական ձևակերպումը տարբեր երկրներում կարող է ունենալ տարբեր իրավաբանական հետևանքներ՝ կախված նրանից, թե պետությունն իրականում որքանով է ընդունում միջազգային իրավունքի իրավական բնույթը՝ ոչ որպես արտաքին պարտադրանք, այլ որպես իր կամքով ստանձնած իրավական պարտավորություն:

Վերոհիշյալից հետևում է, որ միջազգային պայմանագրի նորմերի անմիջական գործողությունը չի կարելի գնահատել միայն սահմանադրական ձևակերպումների հիման վրա: Սահմանադրությունը կարող է ճանաչել միջազգային պայմանագրերի իրավունքի անհրաժեշտությունը, սակայն այդպիսի նորմերի բովանդակային նշանակությունը դրսևորվում է դրանց կիրառելիության և գործառնության միջոցով:

Ինչպես հայտնի է, XIX-XX դարերի սկզբին միջազգային իրավունքի դոկտրինայի հիմնական քննարկվող հարցերից մեկը վերաբերում էր հենց միջազգային պայմանագրերի իրավունքի իրավաբանական բնույթին. մասնավորապես՝ արդյոք այն իրավական համակարգ է և ունի պարտադիր ուժ պետությունների համար<sup>1</sup>: Բանավեճն այն մասին, թե արդյոք միջազգային պայմանագրի իրավունքը իրավունք է, թե պետական կամքի քաղաքական արտահայտություն, դարեր շարունակ եղել է միջազգային իրավագիտության առանցքային վեճերից մեկը: Հավանական է ենթադրել, որ XVIII դարում այս կասկածներն ավելի խորքային էին, հատկապես պայմանագրային իրավունքի մասով, քանի որ պայմանագրերն այդ փուլում հաճախ դիտարկվում էին ոչ թե որպես իրավական ակտեր, այլ որպես «պետական խոստումներ»<sup>2</sup>:

Այս տեսակետը հաստատում են նաև իրավագետ Ջ. Սթորիի գնահատականները ԱՄՆ Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ, ով գրել է. «միջազգային պայմանագրերը որպես օրենքներ դիտարկելու և որպես կատարվող կամ կատարված համաձայնագրեր դիտարկելու տարբերությունը

<sup>1</sup> *St'u մանրամասն Գերագեն Լ.Լ. Имеют ли международные соглашения свойство права? – Петроград, 1915, էջ 1-39: Мартене Ф. Современное международное право цивилизованных народов. Т. 1. Изд-е 3-е, доп. и испр. – СПб., 1895. էջ. 7-14 // URL: <http://repository.law.umich.edu/books/102/>*

<sup>2</sup> *St'u Бюзы I. Ор. ск. էջ 96.*

կենսական նշանակություն ունի հանրային արդարադատության իրականացման համար: Եթե դրանք հանդիսանում են գերագույն օրենքներ, ապա դատարանները պարտավոր են ուղղակիորեն կիրառել դրանք՝ հակադրելով անգամ նահանգների օրենքներին: Սակայն եթե դրանք դիտվեն միայն որպես հանդիսավոր պայմանագրեր, որոնք իրենց բնույթով հանդիսանում են խոստումներ, ապա դրանց կիրառելիությունը դատարանների կողմից կդառնա խնդրահարույց, և դրանց կատարումն անհրաժեշտ կլինի ապահովել այլ պետական մեխանիզմների միջոցով<sup>1</sup>:

Պատահական չէ, որ Սահմանադրության VI հոդվածի 2-րդ կետում շեշտվում է, որ պայմանագրերը հանդիսանում են «երկրի գերագույն իրավունք»: XVIII դարի իրավաբանական մտածողության պայմաններում դա միակ արդյունավետ ճանապարհն էր՝ միջազգային պարտավորության իրավաբանական բնույթը վերականգնելու և այն ներքին իրավակարգում ամրապնդելու համար: Այլ կերպ ասած՝ կլաուզուլայի նպատակը ոչ թե միայն իրավական նորմ սահմանելն էր, այլև իրավունքի տիրույթը հեղափոխականորեն ընդլայնելը՝ միջազգային իրավունքը ներգրավելով ներպետական իրավակարգի մեջ:

**Ամփոփում.**

Վերոհիշյալ դոկտրինալ, սահմանադրական և պատմաիրավական վերլուծությունները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ ընդհանրացնող եզրահանգումները.

**1. Միջազգային պայմանագրերի նորմերի անմիջական գործողության տեսության առաջացումը պայմանավորված է ոչ միայն միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարման անհրաժեշտությամբ, այլև ներպետական իրավական համակարգում իրավական այնպիսի կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությամբ, որով կերաշխավորվի պետության ներպետական իրավակարգում միջազգային պայմանագրերի լիարժեք կիրառումը:**

**2. Ժամանակակից սահմանադրական գործընթացներում առկա մոտեցումները կրկնում են միջազգային իրավունքի ներառման գաղափարը, սակայն հիմնականում շրջանցում են դրա կիրառելիության խնդիրը, այսինքն՝ նրանք ընդունում են, որ միջազգային պայմանագրերի նորմերն օժտված են նորմատիվային ուժով, բայց չեն սահմանում դրանց իրավակիրառ մեխանիզմը<sup>2</sup>:**

<sup>1</sup> *St' u Story, J. Նույն աշխ. էջ 694-695.*

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նույնպես բանավեճային բնույթ է կրում այն հարցադրումը, թե միջազգային պայմանագրերը ունեն՞ իրավական ուժ, թե՞ նաև իրավական գործողություն՝ որպես անմիջական կարգավորող մեխանիզմ:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 4(121)2025

Արդյունքում ակնհայտ է դառնում, որ միջազգային պայմանագրերի իրավունքի իրական ներպետական ազդեցությունը պայմանավորված է ոչ թե միայն սահմանադրական նորմերով դրա ամրագրմամբ, այլ իրավակիրառ պրակտիկայով՝ մասնավորապես դատարանների կողմից միջազգային պայմանագրերի իրավական ուժի ճանաչմամբ և դրանց անմիջական կիրառմամբ:

Այս դիտարկումն ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որովհետև ՀՀ Սահմանադրությունը (հոդվ. 5)<sup>1</sup> թեև ճանաչում է միջազգային պայմանագրերի նորմերի գերակայությունը, այնուամենայնիվ, դրանց իրական, գործնական կիրառելիության խնդիրը մնում է բաց և պահանջում է իրավաքաղաքական և հայեցակարգային հստակեցում:

### Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)<sup>1</sup>՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. Конституция Республики Казахстан от 30 августа 1995 г. // Конституции государств Европы. В 3 т. Т. 2 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М., 2001.

3. Конституция Республики Хорватия от 22 декабря 1990 г. // Конституции государств Европы. В 3 т. Т. 3 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М.: Норма, 2001.

4. Конституция Литовской Республики от 25 октября 1992 г. // Конституции государств Европы. В 3 т. Т. 2 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М.: Норма, 2001.

5. Конституция Украины от 28 июня 1996 г. // Конституции государств Европы. В 3 т. Т. 3 / Под общ. ред. Л.А. Окунькова. - М.: Норма, 2001.

6. Конституция Российской Федерации: принята всенародным голосованием 12 декабря 1993 г. // РГ. 1993. 25 декабря. (в ред. Закона Российской Федерации о поправке к Конституции Российской Федерации от 30 декабря 2008 г. № 7-ФКЗ).

7. **Бэррес Р.Т.** Документы Американской Революции: Декларация независимости, Конституция Соединенных Штатов, Билль о правах. - Тверь;

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)<sup>1</sup>՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

Москва: Альба, 1994. Supremacy Clause [Electronic resource] // Wikipedia: The Free Encylclopedia. URL: [http://en.wikipedia.org/wiki/Supremacy\\_Clause](http://en.wikipedia.org/wiki/Supremacy_Clause)

8. ԱՄՆ ԳԴ որոշում՝ *Owings v. Norwood's Lessee* [Electronic resource]: [U.S. Supreme Court]. February Term, 1809 // Open Jurist. URL: <http://openjurist.Org/9/us/344/ovvings-v-norwoods-lessee>.

9. ԱՄՆ ԳԴ որոշում՝ *James Foster and Pleasants Elam v. David Neilson* [Electronic resource]: [U.S. Supreme Court]. January Term, 1829 // Open Jurist. URL: <http://openjurist.org/27/us/253/james-foster-v-david-neilson>

10. ԱՄՆ ԳԴ որոշում՝ *Ware v. Hilton* [Electronic resource]: U.S. Supreme Court, 1796 // US Supreme Court Cases & Opinions. Vol. 3. P. 237 // Justia: Law & Legal Information for Lawyers, Students, Business and the Public. URL: <http://supreme.justia.com/cases/federal/us/3/199/case.html>.

11. **Барбук А.В.** Непосредственное действие международных договоров: теоретический аспект // БЖМПМО. - 2003. - № 2.

12. **Буткевич О.В.** У истоков международного права. - СПб., 2008.

13. **Герваген Л.Л.** Имеют ли международные соглашения свойство права? – Петроград, 1915.

14. **Мартене Ф.** Современное международное право цивилизованных народов. Т. 1. Изд-е 3-е, доп. и испр. - СПб., 1895 // URL: <http://repository.law.umich.edu/books/102/>

15. Философский энциклопедический словарь / Ред.сост.: Е.Ф. Губский, Г.В. Кораблева, В.А. Лутченко. - М., 2017.

16. **Blackstone, W.** Commentaries on the laws of England. In four books. Book IV. The 11<sup>th</sup> edition. London, 1791 // **Бэррес Р.Т.** Документы Американской Революции: Декларация независимости, Конституция Соединенных Штатов, Билль о правах.

17. **Vazquez, C.M.** The Four Doctrines of Self-executing Treaties // AJIL. 1995. Vol. 89. №4.

18. **Story, J.** Commentaries on the Constitution of The United States: With a preliminary review of the constitutional history of the colonies and states, before the adoption of the Constitution. In III volumes. Vol. III. Boston, Cambridge, 1833. URL: <http://repository.law.umich.edu/books/102/>

## СУЩНОСТЬ И ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ТЕОРИИ ДЕЙСТВИЯ НОРМ МЕЖДУНАРОДНЫХ ДОГОВОРОВ В СИСТЕМЕ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА. ИСТОРИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

### Аннотация

Данная статья посвящена изучению концептуальных вопросов одного из ключевых направлений теории конституционного права — теории прямого действия норм международных договоров, а также систематическому анализу мнений, связанных с происхождением этой теории и особенностями её исторического развития.

Учитывая, что в профессиональной литературе появление теории прямого действия норм международных договоров часто связывают с положениями статьи VI раздела 2 Конституции США и их правовой практикой, в работе систематически анализируется судебная практика Верховного суда США, включая практическое значение отдельных решений.

Особое внимание уделено изучению влияния прямого действия норм международных договоров на национальные правовые системы различных стран, вопросам признания их верховенства и применимости механизмов, обеспечивающих их полное исполнение.

По результатам проведённого анализа сделан вывод, что возникновение теории прямого действия норм международных договоров обусловлено не только необходимостью эффективного исполнения международных обязательств, но и необходимостью их внутренней конкретизации, а также наличием правовых механизмов в международной правовой системе, гарантирующих полное применение международных договоров в национальной правовой системе.

В статье также представлен вывод о том, что данные подходы в полной мере применимы к Республике Армения, поскольку, хотя статья 5 Конституции Республики Армения признает приоритет норм международных договоров, вопрос об их реальном, практическом применении остается открытым и требует правового, политического и концептуального уточнения.

**Ключевые слова:** международный договор, Конституция, национальная правовая система, историко-правовой анализ, теория.

**THE ESSENCE AND OPERATIONAL SIGNIFICANCE  
OF THE THEORY OF THE NORMS OPERATION OF INTERNATIONAL  
TREATIES IN THE SYSTEM OF CONSTITUTIONAL LAW:  
HISTORICAL AND LEGAL ANALYSIS**

**Annotation**

This article is devoted to the study of conceptual issues related to one of the key topics in constitutional law - the theory of the direct effect of the norms of international treaties - as well as a systematic analysis of the views concerning the origin of this theory and certain features of its historical development.

Given that in professional literature the emergence of the theory of the direct effect of international treaty norms is often associated with the provisions of Article VI, Section 2 of the US Constitution and their judicial practice, the work systematically analyzes the case law of the US Supreme Court, including the practical significance of individual court decisions.

At the same time, special attention is paid to the study of the impact of the direct effect of international treaty norms on the domestic legal systems of various countries, including issues related to the recognition of their supremacy and the applicability of mechanisms ensuring their full implementation.

As a result of the analyses conducted, the following conclusions were drawn: the emergence of the theory of the direct effect of international treaty norms is conditioned not only by the need for the effective fulfillment of obligations but also by the need for domestic legal regulation, as well as by the necessity of legal mechanisms within the international legal system that guarantee the full application of international treaties in the domestic legal system of the state.

The paper also presents the conclusion that these approaches fully apply to the Republic of Armenia, because although Article 5 of the Constitution of the Republic of Armenia recognizes the primacy of the norms of international

treaties, the issue of their real, practical applicability remains open and requires legal, political and conceptual clarification.

**Keywords:** international treaty, Constitution, domestic legal system, historical and legal analysis, theory.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 16.11.2025 թ., պրվել է գրախոսության 21.11.2025 թ., ընդունվել է պատգրության 25.11.2025 թ.:*